

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-1-3-Ա

ք. Երևան

08.02.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի փետրվարի 8-ի նիստում քննարկեց 2023 թվականի հոկտեմբերի 11-ին ներկայացուցիչ Մարիամ Էլիբեկյանի կողմից ներկայացված «Ջի2Էյ» ՓԲԸ ընկերության (Երևան 0019, Բաղրամյան պողոտա 6, AM) «TIME TO» (№20222283) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 4-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից կամ ցուցումներից, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական պրակտիկայում կամ առևտրային պրակտիկայում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն բացառապես բաղկացած նկարագրական բնույթի «time to» (Ժամանակն է) գրառումից, որը համընդհանուր է դարձել խոսակցական պրակտիկայում որպես որոշակի գործունեության հետ կապված, համընդհանուր ճանաչում ստացած նշան: Որպես օրինակ կարող են ծառայել Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «time to eat» («Թայմ թու իթ» ՍՊԸ, Երևան, Մ. Ավետիսյան 3, տուն 13 (AM), N 21745, 02.08.2014, N 24057, 01.02.2016, N 24058, 01.02.2016) և «TIME TO print» («Թասկ» ՍՊԸ, Երևան, Դավթաշեն 1-ին թաղ., 51, բն. 21(AM), N 24372, 07.04.2016) համակցված ապրանքային նշանները: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն բացառիկ իրավունքը չի տարածվում ապրանքային նշանի այն տարրերի վրա, որոնք չեն կարող գրանցվել որպես ապրանքային նշան, մասնավորապես նկարագրական բնույթի տարրերի վրա, դրանք բարեխիղճ օգտագործելու և երրորդ անձանց օրինական շահերը չխախտելու պայմանով: Ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես

ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում 35-րդ դասի նույնատիպ ծառայությունների համար պահպանվող՝ «TIME» («Թայմլես» ՍՊԸ, Երևան, Հյուսիսային պող. 5/171 (AM), N 19727, 08.04.2013, N 25845, 20.04.2017, N 25846, 20.04.2017, N 27028, 09.02.2018, N 27029, 09.02.2018) համակցված և բառային ապրանքային նշաններին: Կարգի 119-րդ կետի, 122-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման կարող են համարվել բառային ապրանքային նշանները և համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նիշերից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ գրանցված նիշերի «TIME» բառային տարրն ամբողջությամբ ներառված է հայտարկված ապրանքային նշանի մեջ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու, կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 4-րդ ենթակետի «դ» պարբերության համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից կամ ցուցումներից, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական պրակտիկայում կամ առևտրային պրակտիկայում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն բացառապես բաղկացած նկարագրական բնույթի «time to» (ժամանակն է) գրառումից, որը համընդհանուր է դարձել խոսակցական պրակտիկայում որպես որոշակի գործունեության հետ կապված, համընդհանուր ճանաչում ստացած նշան: Ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային

նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում 35-րդ դասի նույնատիպ ծառայությունների համար պահպանվող՝ «TIME» («Թայմլես» ՍՊԸ, Երևան, Հյուսիսային պող. 5/171 (AM), N 19727, 08.04.2013, N 25845, 20.04.2017, N 25846, 20.04.2017, N 27028, 09.02.2018, N 27029, 09.02.2018) համակցված և բառային ապրանքային նշաններին:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Ներկայացուցիչ Մարիամ Էլիբեկյանի կողմից ներկայացված «Ջի2Էյ» ՓԲԸ ընկերության «TIME TO» (No20222283) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ**

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ